Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

7503

Др. Пиглиоти

Франкфурт
1903

329.14
П-13

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ՀԱՅ ՍՕՑԻԱԼ-ԴԷՄՕԿՐԱՏ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ»

ԵՐ. ՊԱԼԵԱՆ

«ՀԱՅ ՍՕՑԻԱԼ-ԴԷՄՕԿՐԱՏ ՄԻՈՒԹԻՒՆ»Ը

ԵՒ ԻՐ

«ՊՐՕԼԵՏԱՐԻԱՏ» ՕՐԳԱՆԸ

ԳԻՆԸ 60 ԿՊԿ.

Հրատարակիչ
ԳԱՌՆԻԿ Գ. ՄԱԶՄԱՆԵԱՆ

ՐՈՒՄԶՈՒԲ

1903

Տպագրիչ - ԳԱՌՆԻԿ Գ. ՄԱԶՄԱՆԵԱՆ

Руссе, Печатница „Побѣда.“

29:14
П-13

2010

Ա-13

ԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ՀԱՅ ՍՕՑԻԱԼ-ԴԷՄՕԿՐԱՏ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ»

2001

ԵՐ. ՊԱԼԵԱՆ

«ՍՕՑԻԱԼ-ԴԷՄՕԿՐԱՏ ՄԻՈՒԹԻՒՆ»Ը

ԵՒ ԻՐ

«ՊՐՕԼԵՏԱՐԻԱՏ» ՕՐԳԱՆԸ

Հրատարակիչ

ԳԱՌՆԻԿ Գ. ՄԱԶՄԱՆԵԱՆ

1903

ՐՈՒՄԶՈՒԻՔ

Տպագրիչ - ԳԱՌՆԻԿ Գ. ՄԱԶՄԱՆԵԱՆ

„ՀԱՅ ՍՈՑԻԱԼ-ԴԷՄՈԿՐԱՏ ՄԻՈՒԹԻՒՆ"Ը

ԵՒ ԻՐ

„ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏ" ՕՐԳԱՆԸ

Սրանից 3—4 տարի առաջ Կովկասի մէջ առաջին անգամ տեղի ունեցան գործադուլներ յատկապէս երկաթուղային բանուորների մէջ, եւ սօնուեցաւ Մայիս Մէկը Թիֆլիզի մէջ գաղտնի, քաղաքից դուրս եւ փոքրաթիւ խմբերի մասնակցութեամբ։ Այնուհետեւ 1900 ին գործադուլները դարձան յաճախակի—եւ այս կերպ սկսեց կովկասեան բանուորական շարժումը։ Անկասկած այդ շարժումը շատ աննշան էր հասարակական կեանքի ալիքների մէջ մինչեւ 1901 Մայիս Մէկը, երբ կատարուեց առաջին բանուորական հրապարակական մանիֆեստացիան։ Այդ ժամանակից բանտերի, աքսորի, սրի, գնդակի, մարակի եւ մասնաւորապէս նեղութիւնների արհաւիրքների մէջ, գաղտնի եւ ճնշած՝ սկսեցին ծաւալել բանուորական խմբերն եւ սոցիալիստական պրոպագանդան։ Առանց քննելու այստեղ թէ իրանց սկզբնաւորութեան մէջ ի՞նչ են ներկայացնում այդ խմբերն ընդհանրապէս եւ հայ բանուորները մասնաւորապէս, այժմ մեզ համար կարեւոր է միայն հաստատել որ Կովկասի պրոլետարիատը սկսում է հրապարակ ելնել իբրեւ ուրոյն դասակարգ։

Խօսելով հայ բանուորների մասին, պարզ է որ այս իրողութեան հանդէպ հայերէն լեզուով սոցիալիստական գրականութեան զարգացումը հանդիսանում է իբրեւ իրա-

ՀԱՅԿՈՊԵՍԱՆ ՊՐՈՊԱՄԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Արա.ՍՍՀ
Ա. Մեսրոպեան անվան
85110-Ա
258-9
(77-92)

կան պահանջ։ Մինչեւ այժմ, չ'հաշուած կոչերը, պատահական թերթիկները եւ «Հնչակ»ի ազատ ժամերին հրատարակած երկու երեք աննշան բրոշիւրները, Էնգելսի «Գիտական սոցիալիզմ»ը միակ գրուածքն էր, որից օգտուում էին հայ բանուորները, մի գրուածք, որը հրատարակուած է ո՛չ հայ սոցիալիստների ձեռքով, այլ Հ. Յ. Դաշնակցութեան կողմից, թարգմանուած ո՛չ բնագրից, այլ ռուսերէնից եւ լի ամեն տեսակ սխալներով։ Բնական է որ այսչափը հաւասար է ոչնչի։ Եւրոպական սոցիալիստ գրականութեան մօտիկ ճանաչումն, բնագրերից լուրջ թարգմանութիւններ եւ ինքնուրոյն աշխատութիւններ դեռ եւս բացակայում են Կովկասի մէջ։

Առաջին անգամն էր որ 1900 օգոստոսին Ժընեւի մէջ երեւան եկաւ «Հանդէս» սոցիալիստական թէօրիական միամսեայ օրգանը, որն եւ առաջին անգամ ձեռնարկեց հայ սոցիալիստ գրականութեան զարգացման եւ հայ սոցիալիստ կուսակցութեան կազմակերպութեան գործին ինչպէս Կովկասի, նոյնպէս եւ Տաճկա-Հայաստանի, Բուլղարիայի եւ Ամերիկայի մէջ, չշոշափելով հայկական տնտեսական-հասարակական խնդիրները եւ գիտական-փիլիսոփայական բազմաթիւ հարցեր։ «Հանդէս»ն ունեցաւ հինգ թիւ չուրջ 300 մեծադիր էջերով, մի «Մրագիր Հայ Սոցիալ-Դէմոկրատ Կուսակցութեան» 32 էջերով, եւ ֆրանսերէն տեղեկագիր ուղղուած 1900 ի Փարիզի սոցիալիստական Միջազգային կոնգրէսին։ Սակայն այլեւայլ պատճառներով «Հանդէս»ը դադարեց, պատրաստ աջող պարագային նորից վերսկսել գործը։

Երկու եւ կէս տարի յետոյ, այսինքն 1902 հոկտեմբերին Երեւան եկաւ մի նոր հայ սոցիալիստական պարբերական հրատարակութեան առաջին թիւը, որ կոչւում է «Պրոլետարիատ», եւ ունի 24 մեծադիր էջեր։ Դրա մասին է մեր խօսքը։

«Պրոլետարիատ»ը սկսում է մի «Մանիֆէստ»ով որը պարունակում է իր մէջ «Հայ Սոցիալ-Դէմոկրատ Միութեան» դաւանանքը, որպէս եւ յայտարարած է այդ։ Տեղի սղութիւնն անհնար է դարձնում մէջ բերել ամբողջ «Մանիֆէստ»ը, որ ընդամենը 4 էջ է։ Նոյն պատճառով մենք միանգամայն ստիպած ենք չափազանց կրճատել մեր ասելիքները եւ յիշել միայն գլխաւոր կէտերը։

Նախ մենք պիտի ասենք հետեւեալը «Մանիֆէստ»ի ոճի ինչպէս նաեւ այն հարցի մասին թէ ո՞րքան այդ «Մանիֆէստ»ը ներկայացնում է իրանով լրիւ ձեւակերպումն սոցիալիզմի եւ Կովկասեան կեանքի։ Ցիշա՞ծ են արդեօք «Մանիֆէստ»ի մէջ ա՛յն բոլոր «տեզիսներ»ը որոնք պիտի ծառայեն իբրեւ «հիմունք» մի սոցիալ-դէմոկրատական «ծրագրի»։ Պարզ է որ մենք այս պահանջները չէինք ունենայ եթէ «Պրոլետարիատ»ն երեւան գար իբրեւ սոսկ տեղական մասնակի օրգան, զբաղուած միայն բանուորական կազմակերպութիւնների առօրեայ պէտքերով։ Սակայն «Պրոլետարիատ»ը յայտարարում է իրան «Հայ Ս. Դ. Միութեան օրգան», որը նպատակ ունի կազմակերպել եւ ղեկավարել Կովկասի Հայ բանուոր դասակարգն, իբրեւ կուսակցութիւն, եւ պարզել սոցիալիզմի թէօրիական հիմունքները։ Նա հրատարակում է մի «Մանիֆէստ», որը նրան պիտի ծառայէ իբրեւ դաւանանք եւ ուղեցոյց թէ սոցիալիստական թէօրիական եւ թէ Կովկասեան ընդհանուր խնդիրների վերաբերմամբ։ Այս պարագային մեր պարտականութիւնն է լուրջ քննութեան ենթարկել «Պրոլետարիատ»ն եւ իր «Մանիֆէստ»ը։

Ինչ վերաբերում է ոճին, մենք պիտի նկատենք որ այն խակ ու հատուկտոր է, որը եւ մեծ պակաս է մի գրուածքի համար, որովհետեւ ոճը պարզ ցոյց է տալիս թէ ի՛նչ աստիճանի մարսած են գաղափարները եւ

թէ հեղինակն ի՛նչ չափով տիրում է իր նիւթին։ Նոյնը պիտի ասենք եւ բովանդակութեան վերաբերմամբ, ուր առհասարակ մաքերն անաւարտ են եւ պակաս չատ անգամ դասաւորուած խառն ի խուռն եւ անկապ, որով գրուածքը, զուրկ ամբողջութիւնից, միմեանց կցուած ծանօթ ֆորմիւլների կերպարանք է առնում։

Սկզբունքների ձեւակերպութեան մէջ «Մանիֆէստ»ը բաց է թողել չատ կարեւոր կէտեր, որի համար եւ նա չափազանց խակ եւ ազքատ է։ Բաւական չէ ասել թէ գիւղն անջատւում է քաղաքից, թէ կազմւում են խոշոր կեդրոններ, թէ խոշոր արդիւնաբերութեան զարգացման հետ երեւան եկան բուրժուազիա եւ պրոլետարիատ, թէ սոցիալ-դեմոկրատիան կազմակերպում է միջազգային բանւոր դասակարգը, եւ յեղափոխութեամբ պիտի հաստատէ հասարակական սեփականութիւն։ (*) Էապէս այսքանն է միայն ասած, իսկ մնացածը մենք արդէն մէջ ենք բերել հատւածներով մեր քննադատութեան մէջ։ Սակայն գիտական սոցիալիզմն ունի հիմունքներ, որոնց անհնար է չ'յիշատակել այնտե՛ղ ուր խօսք կայ սոցիալիզմի ձեւակերպման մասին։ Այսպէս, «Մանիֆէստ»ի մէջ ոչ միայն բացակայում են չատ կարեւոր խնդիրներ, այլ եւ այնտեղ ոչ մի խօսք կայ ա՛յն էական կէտերի մասին թէ ապրանքի արժէքը (werth, valeur) որոշւում է նրա արդիւնաբերութեան համար գործ դրուած հասարակականօրէն անհրաժեշտ ժամանակով, թէ դրամագլուխը, որ կազմւում այդ ապրանքի փոխանակութեամբ, ուրիշ բան չէ բայց եթէ չ'վճարուած աշխատանքի մասը կամ այն յաւելեալ արժէքը (Mehrwerth, plus-value), որ կապիտալիստ գործարանատէրը լեգալ կերպով խլում է սեփականազուրկ բանւորից, թէ կապիտալիստական ըէժիմի շարժիչն ու գործօնն է մրցումը,

(*) „Պրոլետարիատ" թիւ 1 հոկտ. 1902 էջ 1—3

(Konkurrenz, concurence) եւ արդիւնաբերութեան ու կապիտալի կեդրոնացումը (centralisation) աւելի եւ աւելի պակաս թւով խոշոր կապիտալիստների մօտ, որով անդադար աճում է արդիւնաբերութեան համար կապիտալի անհրաժեշտ քանակը, եւ որի հետեւանքն է միջին խաւերի պրոլետարիզացիան։ (*) Այնտեղ ոչինչ չէ ասած գերարդիւնաբերութեան (Ueberproduktion, surproduction) մասին, որը ներկայ կազմի հիմնական երեւոյթն է, իսկ կապիտալիստական արդիւնաբերութեան կրիզիսները (Krisis crise) յիշած են միայն այսքան եւ այս կերպ. «կապիտալի կատաղի թռիչքները փոխանակւում են արդիւնաբերութեան ճգնաժամերով, փողոց չպրտելով հաղարաւոր բանւորներ» (**)։ Ահա այս կարեւոր սկզբունքների բացակայութիւնը միանգամայն անհիմն եւ անկատար է դարձնում ա՛յն սոցիալիզմը, որի անունով հրատարակւել է «Մանիֆէստ»ը եւ որի ձեւակերպման ձեռնարկել է նա։

Գիտական սոցիալիզմի էական հարցերից մէկն ա՛յն է թէ ի՛նչ հիման վրայ սոցիալիզմը դառնում է անխուսափելի հետեւանք ներկայ կապիտալիստական ըէժիմի։ «Մանիֆէստ»ը պատճառաբանում է հետեւեալ կերպով. «ի նկատի ունենալով որ ժամանակակից սոցիալական անհաւասարութիւնը առաջանում է ներկայ սոցիալական կազմից, սոցիալ-դեմոկրատիան գտնում է որ միմիայն վերջինին ոչնչացնելով կարելի է ձեռք բերել բանւորի ազատութիւնը։ Պրոլետարիատի սոցիալ-տնտեսական իրաւազրկութիւնը առաջանում է գլխաւորապէս նրա արտադրութեան միջոցներում մասն չունենալուց, ուստի սոցիալ-դեմոկրատիան իւր վերջնական նպատակն ունի բանւորի ձեռքն յանձնել աշխատանքի

(*) K. Marx—Das Kapital

(**) «Պրոլետարիատ» թիւ 1, էջ 2

գործիքներն ու արտադրութեան միջոցները։ Որովհետեւ մասնաւոր սեփականութեան չնորհիւ հասարակութեան մի մասը ճնշում է գործ գնում միւս մասի վրայ եւ այդ տեղից է ծագում բոլոր անհաւասարութիւնները, ապա ուրեմն նա պէտք է ոչնչացուի եւ ապագայ սոցիալական կազմը պէտքէ հանդչի հողի եւ արտադրութեան գործիքների հասարակական սեփականութեան սկզբունքի վրայ»։ (*) Բացի այդ, իր երկրորդ էջի վրայ «Մանիֆէստ»ն ասում է. «բանւոր դասակարգին սպառնում է լիակատար այլասեռման վտանգը, եթէ կապիտալիստական անարխային վերջ չ'տրուի»։

Այս հատուածի չորս պարբերութիւններն եւս, որոնք կրկնում են միեւնոյն միտքը, ունեն միանգամայն ուտոպիական մեկնման կէտ եւ իտեալո-տրամաբանական բովանդակութիւն։ Արդէն մի քանի տասնեակ դարերից ի վեր բոլոր ֆիլանտրոֆ եւ բեֆորմատոր մտածողների մեկնման կէտն ա'յդ է եղել—«որովհետեւ» հասարակութեան մէջ տիրում են թշւառութիւն եւ չարիքներ, «ուրեմն» պէտք է նրանց «ոչնչացնել»։ Սակայն չարիքը միշտ մնացել է չարիք, եւ եթէ այն փոխել է իր ձեւը մարդակերութիւնից մինչեւ վարձկանութիւն, այդ կատարել է միայն ա'յն օրէնքով որ յիշած կարգերից իւրաքանչիւրը կրել է իր մէջ պատմական-իրական, եւ աւելի եւս որոշելով, տնտեսական պայմաններ, որոնք անհրաժեշտ եւ հնարաւոր են կացուցել նրա ձեւափոխումը։ Ներկայ կարգերի վերաբերմամբ եւս իրերն ենթարկւում են նոյն պատմական օրէնքին։ Անցած դարի սկզբին մի չարք ուտոպիստ-սոցիալիստներ նոյն իտէալո-տրամաբանական մեկնման կէտն ունեցան եւ քարոզեցին ընդհանուր սեփականութիւն յանուն «հասարակական չարիքի» վերացման։ Սակայն Մարքսի եւ

(*) „Պրոլետարիատ" թիւ 1 էջ 3

Էնգէլսի աշխատութիւններով առաջ եկաւ գիտական սոցիալիզմը, մեկնման կէտ ունենալով իրերի պատմական գնացքը եւ լինելով ձեւակերպումն հասարակական կազմի մէջ գործող պայմանների, պատճառների եւ հետեւանքների։ Այս հողի վրայ միայն կառուցած եւ պայմանաւորած են նրա պահանջներն ու եզրակացութիւնները։ Ըստ Մարքսիզմի, մասնաւոր սեփականութիւնն ու կապիտալիստական արդիւնաբերութիւնը պիտի փոխարինեն կոլլեկտիվ սեփականութեամբ եւ սոցիալիստական արդիւնաբերութեամբ ո'չ այն տրամաբանութեամբ թէ «որովհետեւ անհաւասարութիւն» կայ, «որովհետեւ հասարակութեան մի մասը ճնշուած է, որովհետեւ պրոլետարիատի իրաւազրկութիւնը առաջանում է նրա արտադրութեան միջոցներում մասն չունենալուց, որովհետեւ բանւորներին սպառնում է այլասեռման վտանգը» ապա եւ «ուրեմն պէտք է ոչնչացնել այդ կազմը», —այլ սոցիալիստ բէժիմի իրականացումը հիմնուած է ա'յն օրէնքի վրայ որ ներկայ կապիտալիզմի մէջ կան պատմական-տնտեսական պայմաններ որոնք անհրաժեշտ եւ հնարաւոր են դարձնում կապիտալիզմի ոչնչացումն եւ սոցիալիզմի իրականացումն։

Կապիտալիստական սիստէմի մէջ արդիւնաբերութեան ոյժերն անդադար ապստամբում են սեփականութեան յարաբերութեան դէմ, եւ կապիտալիստ դասակարգն այլ եւս անկարող է տիրապետել ա'յն ոյժերին որ ինքը ստեղծեց։ Գերարդիւնաբերութիւնն ու կրիզները ցնցում են հասարակութեան ամբողջ կազմը, եւ արդիւնաբերական ոյժերն այլ եւս չեն նպաստում բուրժուական սեփականութեան պայմանների զարգացման։ (*) Կապիտալի մոնոպոլը դառնում է արգելք արդիւնաբերութեան ձեւին

(*) K. Marx und F. Engels—Das Kommun. Manifest p. 13. S. A. 1901.

որ աճեց եւ զարգացաւ նրա հետ եւ նրա հովանաւորութեան ներքոյ։ Աշխատանքի սոցիալիզացումն եւ նրա տնտեսական ոյժերի կեդրոնացումը հասնում են մի կէտի, երբ նրանք այլ եւս անկարող են մնալ իրանց կապիտալիստական ծածկոցի մէջ։ Այդ ծածկոցը պայթում է։ (*) Կրիզները բնական պարբերական երեւոյթներ են կապիտալիստական արդիւնաբերութեան մէջ, որը միանդամայն ապստամբում է փոխանակութեան ձեւի դէմ։ Հարստութեան կեդրոնացած առատութիւնը խանգարում է արդիւնաբերութեան եւ գործադրութեան միջոցների կապիտալ դառնալուն, որով դադարում է եւ նրանց ֆունքցիան։ Եւ այսպէս կապիտալիստական արդիւնաբերութիւնը ինքը մերկացնում է իր անընդունակութիւնը ղեկավարել արդիւնաբերական ոյժերը, միւս կողմից իրանք արդիւնաբերական ոյժերը աւելի եւ աւելի զօրեղ կերպով ձգտում են ոչնչացնել այդ հակասութիւնը, ազատուել կապիտալիստական յատկութիւններից, դիմելով դէպի իրական ճանաչողումն իրանց հասարակական արդիւնաբերութեան ոյժերի բնաւորութեան։ (**) Ժամանակակից խոշոր կրիզները, որ ցնցում են համաշխարհային շուկան, բղխում են գերարդիւնաբերութիւնից, որն իր հերթին հետեւանք է ապրանքային արդիւնաբերութեան հետ անխուսափելիօրէն կապված արդիւնաբերական ծրագրի բացակայութեան։ Կապիտալիստական արդիւնաբերութիւնն ինքը փորում է իր գերեզմանը մի կողմից շուկաների սակաւութեան պատճառով եւ միւս կողմից նոր կապիտալիստ երկրների երեւան գալով։ Շուկաներն այլ եւս չեն գոհացնում կապիտալիստական արդիւնաբերական ոյժերին, որով եւ արգելում են նրանց զարգացման, իսկ վերջիններիս

(*) K. Marx—Das Kapital I B. p. 728, V. A. 1890
(**) F. Engels—Anti-Dühring p. 297, D. A. 1894

անհաչիւ եւ բռնի արտադրութեան չնորհով կորչում է անգամին հարստութիւն։ Կապիտալիստական հասարակութիւնը մշտական ճգնաժամի մէջ է։ (*)

Սրանք են ա՛յն տնտեսական պատմական պայմանները որոնք՝ տանում են ներկայ հասարակութիւնը դէպի սոցիալիստական կազմը, տանում են այնտեղ ո՛չ թէ բանւորների վիճակը բարւոքելու դիտաւորութեամբ, այլ ճակատագրօրէն, առանց ուրիշ տեղ տանելու հնարաւորութեան։ Առանց այդ պայմանների, մեր բոլոր հոգսերն ու դատողութիւնները կը մնային ուտոպիա, եւ բանւոր դասակարգը, «ճնշելով, իրաւազուրկ լինելով եւ լիակատար այլասերման վտանգին» ենթարկելով հանդերձ, կ՚մնար նոյն վիճակի մէջ։ Եւ այդ ին՛չ վերին հոգաբարձու է «սոցիալ-դէմոկրատիա» կոչված բանը, որը մի չարք մարդասիրական-դատարանական«ի նկատի» ներ ունենալով, «գտնում է որ ներկայ կարգերը պէտք է ոչնչացնել եւ բանւորի ձեռքն յանձնել աշխատանքի գործիքներն ու արտադրութեան միջոցները»։ Սոցիալ-դէմոկրատիան ո՛չ բարերար է եւ ո՛չ վճիռներ արձակող մի դատաւոր, ինչպէս եւ պրոլէտարիատը ո՛չ«այլասերված» մուրացկան է եւ ոչ դատապարտված մի զոհ։ Սոցիալ-դէմոկրատիան մտաւորութիւնորիական արտայայտիչ եւ ներկայացուցիչ է պրոլետարիատի։ Նրա բոլոր «ի նկատի» ները հիմնված են միայն պատմական կեանքի պրոցէսի վրայ, ո՛չ իբրեւ զգացմունքներ եւ վճիռներ, այլ իբրեւ հետեւանք իրական պայմանների։ Պրոլետարիատն է ա՛յն դասակարգը, որն էապէս իր ձեռքն ունենալով արդիւնաբերութեան ամբողջ կազմը, նրա անխուսափելի պահանջների համեմատ պիտի կանոնաւորէ այն, ոչնչացնելով նրա մէջ կապիտալիստ բէժիմի հակասութիւն-

(*) K. Kautsky—Das Erfurter Programm p. 84—104 D. A. 1899

ները։ Սոցիալ-դեմոկրատիան իր ամբողջութեամբ է՛ ինքը պրոլետարիատն, իբրեւ կազմակերպված քաղաքական-տնտեսական կուսի դասակարգ, եւ նա ոչինչ չ՛ունի «բանուորի ձեռքն յանձնելու», այլ ի՛նքը, գիտակցելով եւ ձեւակերպելով կապիտալիզմի գնացքն ու մօտակայ հետեւանքը, բուրժուազիայի դերն եւ իր պատմական միսսիան, հանդիսանում է ներկայացուցիչ արդիւնաբերութեան մէջ գործող տնտեսական նո՛ր պահանջների եւ իրականացնողը կոլէկտիվ սեփականութեան եւ կոլէկտիվ արդիւնաբերութեան։

Ա՛յս է սոցիալիզմի պատմական անխուսափելիութեան գիտական հիմքը, իսկ պրոլետարիատի վիճակի բարւոքումն, կամ աւելի ճիշտ ասած, դասակարգերի եւ շահագործութեան ոչնչացումն, հասարակական հետեւանքներ են միայն։ Ա՛յս է եւ պրոլետարիատի իբրեւ նոր կազմի ներկայացուցչի, պատմական կոչումը։ Ա՛յս պէտք է պարունակէ իր մէջ մի սոցիալ-դեմոկրատիական «Մանիֆէստ» եւ այ՛ս պէտք է ըմբռնել տալ պրոլետարիատին որ ինքը պատմականօրէն կոչված է տնտեսական-պատմական անհրաժեշտութեամբ հիմնովին յեղափոխել կապիտալիստական արդիւնաբերութիւնն ու բուրժուական բէժիմը եւ բանալ դարպլուխը սոցիալիստական արդիւնաբերութեան։ Ա՛յսպէսով միայն պրոլետարիատը կանգնած կ՛լինի իր դասակարգային դերի մէջ, ընդգրկելով իր պատմական միսսիայի ընդարձակ հորիզոնը։

Ակներեւ է թէ որքա՛ն տարբեր են միմեանցից «Մանիֆէստ»ի եւ մեր մէջ բերած հայեցակէտը։ Մինչդեռ այնտեղ սոցիալիզմը ներկայանում է իբրեւ կանխակալ սկզբունք յանուն պրոլետարիատի վիճակի բարւոքման—այստեղ սոցիալիզմը հանդիսանում է իբրեւ անխուսափելի հասարակական նոր կազմ, մինչդեռ այնտեղ սոցիալ-դեմոկրատիան գիտաւորում է «ճնչված բանուորի

ձեռքը տալ աշխատանքի գործիքներն ու արդիւնաբերութեան միջոցները»։ այստեղ պրոլետարիատը հրապարակ է գալիս իբրեւ պատմական դասակարգ, որ կոչումն ունի իրագործել այդ նոր կազմը։ «Մանիֆէստ»ի մէջ, մի կողմ թողած հատուկտոր, չափազանց յայտնի դարձված քները, այ՛ս կէտն ուշադրութեան արժանի մի՛կն է, որն եւ ըստ «Մանիֆէստ»ի «սոցիալ-դեմոկրատական համաշխարհային կուսակցութեան խիստ որոշված ծրագրի գլխաւոր հիմունքն է»(*)։ Եւ հէ՛նց այս կէտը «սոցիալ-դեմոկրատական Մանիֆէստն» աղաւաղել է անտանելի կերպով, միանգամայն ուրիշ էութիւն տալով նրան, որով եւ «Մանիֆէստ»ը կատարելապէս դուրս է գիտական սոցիալիզմից, իբրեւ ինտելիգենտային իդէօլոգիայ։ Վատնդաւոր բան է ձեռնարկել այնպիսի գործերի եւ ճառել այնպիսի խնդիրների մասին, որոնց վերաբերմամբ «ինիցիատորներ»ը կամ դաղափար չունին եւ կամ նրանց ամբողջ պաշարը սպառւում է երրորդական բերաններից հասած թերի եւ աղաւաղված փրաղներով։ Այդ վիճակի մէջ են «Պրոլետարիատ»ի եւ «Հայ Ս. Դ. Միութեան» կազմակերպութեան «ձեռնարկողները»։ Իսկ այդպիսի վիճակի եռակի վնասներն ակնայտ են թէ՛ գրականութեան եւ կազմակերպութեան զարգացման, թէ պրոլետարիատի շահերի եւ թէ գիտակից ինքնուրոյնութեան տեսակէտից։

Ցիշենք մի ուրիշ կէտ եւս։ «Մանիֆէստ»ի կարծիքով սոցիալիզմի «իրականացման չի կարելի հասնել ոչ բանուորական դասակարգի տնտեսական ինքնագործունէութեամբ եւ ո՛չ մասնակի սոցիալական ու քաղաքական բէֆորմների միջոցով, այլ լոկ արմատական յեղաշրջման—սոցիալական յեղափոխութեան միջոցով»։(**) Անչուշտ

(*) «Պրոլետարիատ» Թիւ 1 էջ 3
(**) «Պրոլետարիատ» Թիւ 1 էջ 3

խօսքն այստեղ պրոլէտարիատի, իբրեւ կազմակերպուած դասակարգային կուսակցութեան, գործունէութեան մասին է։ Իբրեւ այդպիսի, հակառակ «Մանիֆէստ»ի կարծիքին, նրա յարատեւ ու սիստեմաթիք գործունէութեան նպատակն է տնտեսական-քաղաքական յաջորդական բէֆորմներով պատրաստել սոցիալիզմի իրականացումը, որն անկասկած սոցիալական յեղափոխութիւն է, իբրեւ նոր կազմ, եւ որ պէտք է կատարւի յեղափոխութեամբ, նկատի ունենալով բուրժուազիայի օպպոզիցիան։ Սոցիալ-դէմոկրատիան ո՛չ թէ բացառում է տնտեսական գործունէութիւնն ու բէֆորմները, հակադրելով նրանց յեղափոխութիւնը, այլ ճանաչում է նրանց իբրեւ անհրաժեշտ միջոցներ, որոնց համար մղած կուռվ իսկապէս լեցուած է նրա գործունէութիւնը, միջոցներ, որոնք սակայն պիտի ձեռք բերուեն միայն դասակարգային կռուի հողի վրայ եւ կուսակցութեան, իբրեւ դիմադիր տարրի, ձեռքով։ Իսկ յեղափոխութիւնն, իբրեւ միջոց, կուսակցութեան վերջին եւ գերագոյն ակն է, որով միանգամայն յեղաշրջւում է ներկայ կազմը, տեղի տալով նախօրօք հաստատուած սոսիալիստական կազմին։ (*)

Ներկայ բրոշիւրի ծաւալը մեզ ստիպում է կանգ առնել այստեղ թէորիական հարցերի վերաբերմամբ։

Այժմ մենք պիտի անցնենք Կովկասին։

Նախ աչքի ընկնող մի անյարմարութիւն— այդ «Միութեան» անունն է։ Մինչդեռ «Պրոլետարիատ»ի ձեռնարկողները ճանաչում են միայն Կովկասեան հայ

(*) Տես Ցիրիխի (1893) եւ Լօնտօնի (1896) կոնգրէսի որոշումները։ K. Kautsky—Das Erfurt· Progr· «Soziale Reform und Révolution» գրուխը, եւ նոյն հեղինակի Der Parlament, եւ Bernstein und das Socialdem· Progr· այլեւայլ էջեր։

բանուորական շարժումը, նրանք իրանց կազմակերպութիւնը կոչում են «Հայ Սոցիալ-Դէմոկրատների Միութիւն», իսկ «Պրոլետարիատ»ը—«օրգան Հայ Ս. Դ. Միութեան»։ Միայն Կովկասի մէջ չեն ապրում հայեր եւ «Միութիւն»ը կարող էր կոչւել այդկերպ այն պարագային, եթէ նա նպատակ ունենար կազմակերպել հայ բանուորներին բոլոր հայաբնակ երկրների մէջ։ Նոյնանման կեր դով վարւել է իր ժամանակին եւ «Լեհական Սոցիալիստ Կուսակցութիւն»ը, թէեւ մասամբ նա կարող է վերագրել այդ տիտղոսն ամբողջ Լեհաստանին, որովհետեւ չ'նայած որ Գերմ. եւ Ավստր. Լեհ սոցիալիստներն արդէն կազմակերպած են յիշած երկրների կուսակցութիւնների մէջ, բայց «Լեհ Սոցիալիստ Կուսակցութիւն»ն այդ տեղերն եւս ունի իր խմբերը։ Դրա, հակառակ, Ռուսական Լեհաստանի եւ Լիտվայի Սոցիալ-դէմոկրատներն իրանց անուամբ միանգամայն որոշել են սահմանները, կոչելով իրանց «Լեհ Սոցիալ-Դէմոկրատ Կուսակցութիւն Լեհական թագաւորութեան եւ Լիտվայի»։ Նոյնն է արել եւ Հրէական Բունդը, որ կոչւում է «Ընդհանուր Հրէական Բանուորական Միութիւն Լիտվայի, Ռուսաստանի եւ Լեհաստանի»։ Նոյնը պիտի անէին եւ «Պրոլետարիատ»ի ձեռնարկողները, իրանց կոչելով «Կովկասեան Հայ Ս. Դ. Միութիւն»։

«Մանիֆէստ»ի Կովկասեան եւ հայկական կեանքին վերաբերեալ մասը նոյնչափ աղքատ եւ աղաւաղած է որչափ եւ նրա թէորիական մասը։ Այնտեղ այսքանն է միայն ասած թէ սոցիալ-դէմոկրատիան պէտք է կռւէ ցարիզմի դէմ, եւ թէ ինքը «հնարաւոր չէ դտնում մտցնել ծրագրի մէջ Կովկասի ավտոնոմիան»։ Ահա ձեզ ծրագիր։ Եւ ո՛չ մի խօսք տէրրորի մասին, ա՛յն միջոցների եւ այն ծաւալի մասին որոնցով պրոլետարիատը պիտի մղէ ցարիզմի դէմ այդ կռիւը, ո՛չ մի խօսք սոց. դէմոկրատիայի եւ այլ կուսակցութիւնների յարաբերութեան եւ

գործակցութեան մասին, ո՛չ մի խօսք բանւոր դասակարգի անմիջական պահանջների մասին, հայկական խնդրի եւ դէպի հայ յեղափոխական կուսակցութիւնները բռնելիք դիրքի մասին, ինչպէս նաեւ ա՛յն բացառիկ օրէնքների վերաբերմամբ որ ռուսական բռնակալութիւնը սահմանում է ընդհանրապէս նուաճած ազգերի եւ մասնաւորապէս հայերի նկատմամբ, եւայլն եւայլն—մի չարք առաջնակարգ հարցեր, առանց որոնց «Մանիֆէստ»ի Կովկասեան եւ կուսակցութեան գործունէութեան վերաբերեալ մասը, որ ընդամենը մէկ էջ է, ամենախակ կրկնութիւն է մի չատ բանալ ֆորմիւլի թէ պէտք է կուռել ցարիզմի դէմ։ Այդպիսի «Մանիֆէստ»ների չուրջ խմբուած կազմակերպութիւնները պիտի ենթարկւեն միչտ ամեն աղաւաղումների։ Այդպիսի աղաւաղումներից մէկն է օրինակ եւ այն թէ «գործադուլները ո՛չ մի չչափելի օգուտ չեն բերել պրոլետարիատին, բացի այ՛ն մասնաւոր դիջումներից որ անում են տէրերը» (*)։ Ի՞նչ դատարկ բան են եղել այդ գործադուլները։ Երբ գործադուլները տեղի են ունենում չափւած եւ նախամտածւած, մի ամբողջ չրջանի բանւորների անտեսական պայմանների մէջ մացնում են փոփոխութիւններ, որոնք թէ՛ նրանց վիճակն են բարելաւում եւ թէ հիմք են դառնում ապագայի մէջ նոյն պահանջների պետական ընդհանուր օրէնք դառնալու։ Եւրոպական պրոլետարիատի գործադուլների պատմութիւնը միանգամայն այդ է ապացուցանում։ (**) Տնտեսական այս գործունէութիւնը պրոլետարիատի անհրաժեշտ պայմաններից մէկն է,

(*) «Պրոլետարիատ» թիւ 1 էջ 4

(**) Տես Ցիւրիխի Նօվգրէսի որոշումը, K. Kautsky—Das Erfurter Progr. «Der politische Kampf» գլուխը, ինչպէս նաեւ Ժ. Գէսի 1894 ին Ֆրանսիական պարլամենտի մէջ առաջարկած պրոէֆտը («Le Socialiste» 14 փետրուար)

միայն խնդիրն այն է որ պրոլետարիատը ո՛չ թէ սոսկ բանւորական սինտիքատներ ներկայացնէ իրանով, այլ կազմակերպւած քաղաքական դասակարգային կուսակցութիւն, որի ղեկավարն են սոցիալիստական սկզբունքներն եւ իր պատմական միսսիան։ Առանց այս իմաստով անտեսական գործունէութեան, պրոլետարիատը կարող է միանգամայն դուրս ելնել իր դասակարգային սահմաններից եւ ընկնել դիպլոմատօ-պոլիտիքական ավանտիւրիզմի մէջ։

Բնական է որ այսպիսի պայմանների մէջ, երբ «Պրոլետարիատ»ի ձեռնարկողները մի կողմից բաց են թողնում եւ կամ աղաւաղում են բազմաթիւ կենսական հարցեր, եւ միւս կողմից հաղիւ մէջ տեղ են եկել, առանց դեռ եւս թէօրիական կամ գործնական որեւէ աշխատանք կատարած լինելու, հենց առաջին թւից հրատարակելով իրանց «մի ճիւղ Ռուսաստանի Սոցիալ-Դէմօկրատիական Բանւորական Կուսակցութեան, միանգամայն համերաշխ նրա հետ», եւ իրանց օրգանի ճակատին տեղաւորելով «Ռուսաստանի Ս. Դ. Բ. Կուսակցութիւն» պաշտօնական տիտղոսը(*), նրանք ոչ թէ միայն կանխահաս ձեռնարկ են արել, այլ եւ ձգել են իրանց միանգամայն դժւարին եւ ստորադրեալ կացութեան մէջ։ Որ համայն Ռուսաստանի բոլոր ազգութիւնների պրոլետարիատը դասակարգային համերաշխութեամբ պիտի կազմէ մի՛ եւ սոսկ կուսակցութիւն—այդ իրականութեան պահանջն է եւ սոցիալիզմի սկզբունքներից մէկը։ Սակայն պարզ է որ այդ համերաշխութիւնը չ'պիտի իրագործւի ո՛չ էպիթեթներով եւ ո՛չ յայտարարութիւններով։ Դրա համար անհրաժեշտ է թէօրիական եւ գործնական աշխատանք, որին պէտք է որ նւիրէ կուսակցութիւնն իր ոյժերը, բոլոր պայմաններն ու հանգամանքները կշռած, որոշելով

(*) «Պրոլետարիատ» թիւ 1 էջ 1

միանգամայն այդ համերաշխութեան ծաւալն ու էութիւնը։ Եթէ «Ռուսաստանի Ս. Դ. Բ. Կուսակցութիւն» ասելով մենք հասկանանք Ռուսաստանի բոլոր ազգութիւնների կազմակերպած պրոլետարիատի մի ընդհանուր կուսակցութիւն—այդպիսի բան գեռեւս գոյութիւն չ'ունի։ Այդպիսի տիպոս կրում են միայն «Իսկրայ»ի կազմակերպութիւնը, «Ռուս Յեղափոխական Սոց. Դէմոկրատական Միութիւն»ը, եւ «Ռուս սոց. Դէմոկրատների Միութիւն»ը, որոնք միասին կազմում են մի կուսակցութիւն, եւ ապա Հրէական Բունդը։ Միութեան իրականացումը գեռ ապագայի գործ է, երբ ընդհանուր կոնգրէսի մէջ կ'որոշեն այդ միութեան հիմունքները եւ երբ բոլոր ազգութիւնների պրոլետարիատն եւ բոլոր խմբերը կը կազմեն մասն այդ միութեան։ «Պրոլետարիատ»ն աւելի շրջահայեաց կ'լինէր եթէ առանց էպիթեթների իր «Մանիֆէստ»ի մէջ չեշտէր համերաշխութեան սկզբունքն եւ որոշէր պայմանները, ապագային թողնելով պաշտօնական գիտակից համակերպումն այդ սկզբունքին։ Եւ «ճիւղ» դառնալու յայտարարութիւնն այն ժամանակ միայն իմաստ կունենար, եթէ յիշած աշխատանքից յետոյ այդ լինէր արդէն ընդունած որոշման պաշտօնական հաստատումն այլեւայլ կազմակերպութիւնների մէջ։

«Մանիֆէստ»ի մէջ ոչինչ չկայ մի այլ չափազանց կարեւոր հարցի մասին։ Ի՞նչ է մտածում Հայ Ս. Դ. Միութիւն»ը Կովկասի հայ բանւոր դասակարգի կազմակերպութեան ձեւի եւ նրա յարաբերութեան մասին «Ռուսաստանի Ս. Դ. Բ. Կուսակցութեան» մէջ մտնող մասերի հետ։ Կովկասի այլեւայլ ազգութեան բանւոր դասակարգն ընդհանրապէս եւ հայ բանւոր դասակարգը մասնաւորապէս պիտի ունենա՞ն արդեօք կազմակերպչական ինքնուրոյնութիւն, թէ՛ Կովկասի ամբողջ պրոլետարիատը խառնուրդն՞ պիտի ձուլի մի եւ սոսկ կազ-

մակերպութեան մէջ—սա մի խնդիր է որ վաղը պիտի հրապարակ գայ Կովկասի մէջ իբրեւ առաջնակարգ պահանջ։ Սակայն այս հարցը «Մանիֆէստ»ը կողմնակի յիշում է երկուողով ուրիշ տեղ, իբրեւ պատասխան բոլորովին այլ հարցի։ Խօսելով Ռուսաստանի ազգութիւնների ավտոնոմիայի մասին, նա ասում է. «ինչ վերաբերում է Կովկասին մենք պիտի ձգտենք զանազան ազգութեանց պատկանող բանւորներին ի մի ժողովել մէկ ընդհանուր սոցիալ-դէմոկրատական մարմին կազմակերպելու համար»(*)։ Այստեղ «Մանիֆէստ»ը չիմթում է երկու տարբեր կատէգորիաներ—ազգային ավտոնոմիան եւ կուսակցութեան կազմակերպութեան ձեւը։ Այսպէս թէ այնպէս, կազմակերպութեան վերաբերմամբ «Մանիֆէստ»ի կարծիքն այ՛ն է թէ պէտք է «մէկ ընդհանուր սոցիալ-դէմոկրատական մարմին կազմել»։ Բայց հարցը դրանով չէ լուծւում, որովհետեւ կարելի է մէկ ընդհանուր մարմին կազմել կամ խառնուրդն ձուլելով եւ կամ առանձին մասնակի կազմակերպութիւններ ունենալով։ Եւ դրա մէջ է խնդրի էութիւնը։

Մեր կարծիքով, Կովկասի իւրաքանչիւր ազգութեան բանւոր դասակարգ պիտի ունենայ առանձին կազմակերպութիւն—արւարձանային կոմիտէներ, գիւղի կամ քաղաքի կոմիտէներ, շրջանակային կոմիտէներ, որոնք միասին կունենան իրանց Կեդրոնական Խորհուրդը, Վերաքննիչ Մարմինն եւ Ընդհանուր Ժողովը, ձեռնհաս միայն տեղական եւ իրանց վերաբերեալ խնդիրների մէջ։ Այնուհետեւ կընտրւի Ընդհանուր Կեդրոնական Խորհուրդ, բաղկացած բոլոր ազգութիւնների ներկայացուցիչներից, որը եւ կ'վարէ կուսակցութեան ընդհանուր եւ խոշոր գործերը։ Այսկերպ Կովկասի համայն պրոլետարիատը կ'կազմէ մէ՛կ ընդհանուր կուսակցութիւն,

(*) «Պրոլետարիատ» թիւ 1 էջ 4

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

իսկ իւրաքանչիւր ազգութեան բանւոր դասակարգ կը կազմէ մի որոշած մասն ընդհանուր կուսակցութեան։ Հակառակ պարագային, եթէ այլեւայլ ազգութիւնների պրոլետարիատը խառնօրէն պիտի ձուլի մասնակի կոմիտէների մէջ, նոյն իսկ «Մանիֆէստ»ի տեսակէտից, ինչ՞ իմաստ ունի նրա յայտարարութիւնը թէ «Պրոլետարիատ»ը է օրգան «Հայ Սոցիալ-Դէմոկրատ Միութեան» որն իր հերթին է՛ մի «ճիւղ Ռուսաստանի Ս. Դ. Բ. Կուսակցութեան»։ Ակներեւ է որ «Հայ Սոցիալ-Դէմոկրատների Միութիւն» կազմել եւ «ճիւղ» դառնալ կարելի է միայն այ՛ն ժամանակ, երբ այդ «Միութիւն»՝ն եւ այդ „ճիւղ"ը առանձին մարմին են ներկայացնում, որը որոշ հիմունքների վրայ կապւում է ուրիշ համանման մարմինների հետ։

Մեր յիշած ձեւի կազմակերպութեամբ միայն իւրաքանչիւր ազգութեան պրոլետարիատի մէջ արագ եւ բնական կերպով կ՝առաջանայ պրոպագանդան իր մայրենի լեզուով, ինչպէս նաեւ ինիցիատիվան եւ գործնական ձեռնարկներ։ Միւս կողմից այսպէսով միայն կարող կ՝լինի զարգանալ իւրաքանչիւր ազգութեան պրոլետարիատի իր լեզուով սոցիալիստական գրականութիւնը, որի հետ կապւած է նաեւ իւրաքանչիւր ազգութեան սոցիալիստ ոյժերի զարգացումը, թէ գործնական եւ թէ թէորիական տապարէզների վրայ, իրանց մայրենի լեզուով, որն եւ առաջին պայմանն է նրանց բոլոր ընդունակութիւնների հրապարակ գալուն։ Հայ սոցիալիստ գրականութեան եւ Հայ սոցիալիստ ոյժերի զարգացումն կենսական պահանջ է այ՛ն իրողութեան որ Կովկասի մէջ գոյութիւն ունի Հայ բանւոր դասակարգ։ Իրական այս պահանջը կարող է խեղաթիւրւել եւ ոչնչանալ մի կողմից խառն կազմակերպութեան մէջ եւ միւս կողմից Ռուս բոնակալութեան ճնշումների տակ, որպիսի պարագային կ՝դանդաղի Հայ պրոլետարիատի զարգացումն, կ՝ջլատւեն բոլոր Հայ

ինտելիգենդ ոյժերը, եւ Հայ պրոլետարիատը, փոխանակ ինքնուրոյն մասն կազմելու միջազգային դասակարգային համերաշխութեան մէջ, կ՝դառնայ ցիրուցան այլասեռւած եւ կիսայամբ յաւելումն այլալեզու կազմակերպութիւնների մէջ։ Այդ իսկ պատճառով Հայ սոցիալիստ ինտելիգենցիան եւ Հայ պրոլետարիատն իրանց ձեռքը պիտի առնեն հայերէն լեզուով սոցիալիստ գրականութեան զարգացման գործը, որի էական պայմաններից մէկն է լեզուային կազմակերպչական ինքնուրոյնութիւնը։ Պարզ է որ լեզուային-կազմակերպչական այս իրական պահանջը մենք միանգամայն տարբերում ենք ազգային ինքնուրոյնութեան պահանջից, որը քաղաքական խնդիր է։ Պարզ է նաեւ որ մենք ընդմիշտ հեռու ենք ամեն ազգայնական տրամադրութիւնից, եւ անում ենք այ՛ն, ինչ անում են բոլոր երկրների սոցիալիստները, որպէս նաեւ մեր հարեւան ռուս սոցիալիստները։ Լեզուն պատկանում է որեւէ պատմական-աշխարհագրական միջավայրի մէջ ապրող ամբողջ հասարակութեան, եւ նա չէ՛ պարունակում իր մէջ որեւէ հիմունք որը դասակարգային բաժանման պատճառ դառնար, թէեւ սոցիալիստ բարբառը կարող է ունենալ ուրիշ ոճեր եւ դարձւածքներ քան բուրժուական բարբառը։ Մտաւոր արտայայտութեան եւ իրական գործունէութեան իրրեւ միակ միջոց, մայրենի լեզուն միանգամայն անհրաժեշտ է հայ բանւոր դասակարգին, եւ նա նոյնչափ պէտք է պաշտպանէ իր լեզուն, որչափ նա հակառակորդ է ամեն տեսակ ազգայնական սկզբունքներին եւ զգացմունքներին, բուրժուական դեղարուեստից եւ գրականութիւնից սկսած, մինչեւ մասնաւոր սեփականութեան եւ չահագործութեան վրայ հաստատւած բուրժուական-դասակարգային բարոյականութիւնն եւ հայրենասիրութիւնը։

Տարբերւելով միմեանցից միայն լեզուով եւ թերեւս այլեւայլ մանր յատուկ պահանջներով, իրրեւ ինքնուրոյն

եւ գիտակից միութիւններ օրգանապէս կապելով միմեանց հետ, քարոզելով նոյն սկզբունքները եւ կատարելով նոյն գործերը, Կովկասի այլեւայլ ազգութեան պրոլետարիատը, իբրեւ մի՛ եւ սոսկ դասակարգ իր բոլոր տնտեսական, քաղաքական եւ կուլտուրական պահանջներով, կ'կազմէ մի՛ եւ սո՛սկ սոցիալ-դէմոկրատ կուսակցութիւն, որի մէջ ամեն մէկը կ'ունենայ իր տեղը եւ ամեն ինչ կ'ընթանայ անընդհատ ճանապարհով։ Այս գործի մէջ օրինակ է Ավստրիայի Սոց-Դէմոկր. Կուսակցութիւնը, որը 1897 եւ 1898 ի կոնգրէսների մէջ մօտաւորապէս վերը յիշած ձեւով վճռեց ազգութիւնների խնդիրը կազմակերպական տեսակէտից, կուսակցութեան միութեան մէջ տեղաւորելով ինքնուրոյն վեց ազգութիւնների բանւոր դասակարգը։ (*)

Մենք հասնում ենք Կովկասեան ազգերի ավտոնոմիայի խնդրին։ «Մանիֆէստ»ն ասում է. «ի նկատի ունենալով որ Ռուսիայի իշխանութեան տակ գտնուում են իրանց կուլտուրական կեանքում բազմաթիւ առանձնայատկութիւններ ունեցող ազգութիւններ եւ գտնելով որ միմիայն տեղական ինքնավարութեան լայն զարգացումը կարող է պաշտպանել Ռուսիայի կազմի մէջ մտնող տարբերի շահերը, մենք անհրաժեշտ ենք համարում ազատ Ռուսիայում դաշնակցական (ֆեդերատիվ) հասարակապետութեան կազմակերպութիւնը։ Իսկ ինչ վերաբերում է Կովկասին, ուշադրութեան առնելով նրա ազգաբնակութեան բազմացեղութիւնը, մենք պիտի ձգտենք բոլոր սոցիալիստական տարբերը եւ գտնուող ազգութեանց պատկանող բանւորներին ի մի ժողովել մէկ ընդհանուր Սոցիալ-Դէմոկրատական մարմին կազմակերպելու, միապետութեան դէմ աւելի յաջող մաքառելու

(*) W. Ellenbogen—La democratie Socialiste Autrchienne («Mouvement Socialiste» 1900 No. 37)

համար։ Ազատագ Ռուսիայում մենք թողնում ենք իւրաքանչիւր ազգի իրան որոշելու իւր գրութիւնը, որովհետեւ ազգայնական ազատութեան մէջ մենք տեսնում ենք քաղաքացիական ազատութեան մի որոշ տեսակը։ Այս սկզբունքով առաջնորդուելով եւ ի նկատի ունենալով Կովկասի ազգաբնակութեան բազմացեղութիւնն ու ազգութիւնների աշխարհագրական բաժանման բացակայութիւնը, մենք հնարաւոր չենք գտնում մտցնել մեր ծրագրի մէջ Կովկասեան ազգութիւնների քաղաքական ավտոնոմիան, այլ լոկ ավտոնոմիա կուլտուրական կեանքի վերաբերեալ, այսինքն լեզուի, ուսումնարանների, կրթութեան եւայլն լիակատար ազատութիւն»։ (*)

Այս մի էջ հատուածի մէջ մենք նախ պիտի մատնանիշ անենք մի շարք հակասութիւնների վրայ։ Եթէ, ինչպէս „Մանիֆէստ"ն է ասում, միայն տեղական ինքնավարութիւնը կարող է պաշտպանել Ռուսաստանի այլեւայլ ազգութիւնների շահերը, որի համար նա անհրաժեշտ է համարում «դաշնակցական հասարակապետութիւնը», ուրեմն եւ նոյնը նա պէտք է պահանջէ եւ Կովկասի վերաբերմամբ, պաշտպանելու համար Կովկասի ազգութիւնների շահերը։ Սակայն «Մանիֆէստ»ը չէ ընդունում Կովկասի ազգերի ֆեդերացիան եւ այսպիսով վերջիններս զրկուում են այն շահերի պաշտպանութիւնից, որ ձեռք են բերում «Մանիֆէստ»ի կարգադրութեամբ Ռուսաստանի միւս ազգերը։ «Մանիֆէստ»ն ասում է թէ Կովկասի բազմացեղութիւնն արգելք է դրան, սակայն, օրինակ, Լեհաստանի եւ Լիտվայի մէջ եւս ապրում են Լեհեր, Լիտվացիներ, Հրէաներ, Ռուսներ եւայլն, եւ միւս կողմից Կովկասի մէջ եւս կարելի է մտցնել համեմատական աշխարհագրական բաժանումն, ազգութիւնների խտութեան չափով։ Եւ մի՞թէ այսպիսի

(*) "Պրոլետարիաս„ թիւ 1 էջ 4

մի նկատումն կարելի է բաւարար համարել եւ մեկնման կէտ դարձնել մի պահանջի, որը միանգամայն ուրիշ հանգամանքներով է պայմանաւորւած։ Այնուհետեւ «Մանիֆէստ»ը գտնում է որ Կովկասի համայն պրոլետարիատը պէտք է ժողովել մի ընդհանուր կուսակցութեան մէջ, «միապետութեան դէմ աւելի յաջող մաքառելու համար։» Եթէ այդ «յաջող մաքառման» պարմանն է այլեւայլ ազգութիւնների պրոլետարիատն ի մի ժողովել, ինչու՞ նոյնը չ'անել եւ Ռուսաստանի միւս ազգութիւնների վերաբերմամբ։ Այսպէս, վերջիններս դատապարտւում են անյաջող մաքառման բայց վարձատրւում են «դաշնակցական հասարակապետութեամբ», իսկ Կովկասցիները յաջող մաքառմամբ զրկւում են դրանից եւ իրանց «չաների պաշտպանութիւն»ից։ Այս՛ է «Մանիֆէստ»ի կամքը։ Ապա «Մանիֆէստ»ը միանգամայն չփոթում է ազգային ազատագրական, իբրեւ քաղաքական պահանջ, կուսակցութեան կազմակերպական ինքնուրոյնութեան հետ, իբրեւ գործի եւ ղեզի պահանջ։ Մէկը հակադրելով միւսին, նա ասում է թէ Ռուսաստանի ազգութիւնները պէտք է «դաշնակցական հասարակապետութիւն» կազմեն, իսկ Կովկասի ազգութիւնների բանւորները պէտք է «մէկ ընդհանուր սոցիալ-դէմոկրատական մարմին» կազմեն։ Պարզ է որ այս երկուքը տարբեր կատէգորիաներ են, եւ հակադրական պարագային կարելի է միայն ասել թէ մի տեղ—քաղաքական «դաշնակցական հասարակապետութիւն», միւս տեղ—քաղաքական միութիւն։ Այլեւայլ ազգութիւնների բանւորները կարող են տարբեր կազմակերպութիւններ ունենալ միեւնոյն կուսակցութեան մէջ, նոյնիսկ միանգամայն անկախ կուսակցութիւններ կազմել առանց «դաշնակցական հասարակապետութեան» պահանջ դնելու, որպէս օրինակ, Ամսարիական սոցիալիստ կուսակցութիւնը եւ «Լեհական սոցիալ-դէմոկրատ կուսակցութիւնը»։

«Մանիֆէստ»ը Ռուսաստանի ազգութիւնների համար պահանջում է «դաշնակցական հասարակապետութիւն», իսկ Կովկասի վերաբերմամբ «ի նկատի ունենալով ազգարնակութեան բազմացեղութիւնը», նա «դաշնակցութիւն»ը փոխարինում է «կուլտուրական կեանքին վերաբերեալ ավտոնոմիայ»ով։ Տարօրինակ է որ «Մանիֆէստ»ը միշտ այլեւայլ բաներ «ի նկատի» ունի, առանց երբէք էականն« ի նկատի» ունենալու։ Չէ՞ր կարելի արդեօք աւելի ծանրակշիռ հանգամանքներ «ի նկատի» առնելով, օրինակ հէնց կառավարութեան զինւորական ոյժը, Ռուսաստանի ազգութիւններին եւս գոհացնել միայն «կուլտուրական կեանքին վերաբերեալ ավտոնոմիայ»ով։ Բայց «Մանիֆէստ»ը պահանջելով«դաշնակցական հասարակապետութիւն», կրկնում է իր պահանջն այս կերպ. «թողնում ենք իւրաքանչիւր ազգի իրան որոշելու իր գրութիւնը»։ Ցիչած կտորը բառացի թարգմանութիւն է «Իսքրայ»ի եւ «Զառեայ''ի առաջարկած ծրագրային պրոէքտի։(*) Այս խօսքերը «Մանիֆէստ»ը բնականաբար ըմբռնել է «դաշնակցական հասարակապետութեան» մտքով, որ եւ նա առատօրէն պարգեւում է Ռուսաստանի ազգութիւններին, բացի Կովկասից։

Եւ այդ ինչ ,,կուլտուրական բազմաթիւ առանձնայատկութիւններ'' են, որոնց պաշտպանման անունով ,,Մանիֆէստ''ը Ռուսաստանի ազգութիւններին տալիս է ,,դաշնակցական հասարակապետութիւն'' տիտղոսը։ Կապիտալիզմի հաստատմամբ Եւրոպական բոլոր ազգերը մկրտուեցին կապիտալիստական կուլտուրայի աւազանի մէջ։ Նոյնը կատարուեց եւ Ռուսաստանի ազգութիւնների վերաբերմամբ։ Մասնաւոր սեփականութիւն, վարձու

(*) ,,Uckpa'' No 21, *յունիս* 1902 *եւ* ,,Заря''No 4 *օգոստ.* 1902

աշխատանք, մրցումն, չահագործութիւն, հաւասարութիւն, օրէնքի առաջ (բացի զեղծումներից), ոստիկան, զինուոր եւ կղեր, պաշտպան բուրժուազիայի դասակարգային տիրապետութեան—ահա Ռուսաստանի ազգութիւնների բուրժուական «կուլտուրա»ն, որ մէկ եւ ընդհանուր է ամէնքի համար։ Դրանից դուրս մնում են մի չարք ազգային-տեղական տարբերութիւններ ինտիմ ընտանեկան սովորութիւնների եւայլն, որոնք իրանցով որեւէ հասարակական ֆակտոր չեն ներկայացնում, եւ ոչ էլ «կուլտուրայ», եւ որոնք ոչնչանում են յաջորդաբար։ Արդեօք այդպիսի՞ «կուլտուրական առանձնայատկութիւնների» պաշտպանման անունով է որ «Մանիֆէստ»ը պահանջում է „դաշնակցական հասարակապետութիւն»։ Ինչ վերաբերում է «լեզուին, ուսումնարաններին, կրթութեան եւ այլն եւ այլն», դրանց պաշտպանման համար եթէ Կովկասի մէջ բաւական է միայն "կուլտուրական կեանքին վերաբերեալ ավտոնոմիայ", նոյնը կարծում ենք որ բաւական կը լինի եւ Ռուսաստանի ազգութիւնների համար։

„Մանիֆէստ"ը թէեւ Կովկասեան ազգերի համար „դաշնակցութիւն" չէ պահանջում, բայց նա էապէս ներկայանում է ազգայնական ձգտումներով համեմատած, որովհետեւ նախ, նա այդ „դաշնակցութիւն"ը պահանջում է Ռուսաստանի ազգութիւնների համար, երկրորդ, եթէ նա չէ պահանջում նոյնը Կովկասի վերաբերմամբ, այդ նրա համար է որ «ազգարնակութեան բազմացեղութեան» պատճառով «հնարաւոր չէ գտնում» այն, ապա թէ ոչ պէտք էր որ պահանջէր։ Բացի այդ, այ՛լ բան է ռուս կամայականութիւնների դէմ պահանջել օրէնքի հաւասարութիւն եւ ադմինիստրատիվ ռէֆորմներ եւ այլ բան է ասել թէ «ազգայնական ազատութեան մէջ մենք տեսնում ենք քաղաքացիական ազատութեան մի որոշ տեսակը»։ Այդպիսի «սկզբունքով առաջնորդուել»

նշանակում է բուրժուական ազգայնութեան իդէոլոգիան մեկնման կէտ առնել այնտեղ՝ ուր խօսք կայ պրոլետարիատի դասակարգային տեսակէտից այս կամ այն քաղաքական պահանջը սահմանել։ Այսօր Ռուսաստանի մէջ անխտիր բոլոր ազգութիւնների, դրանց հետ եւ ռուսների քաղաքացիական ազատութիւնը ճնշած է բռնակալութեամբ, եւ ի՞նչ գիտենք թէ վաղը, եթէ ձեռք բերուի «դաշնակցական հասարակապետութիւն», նոյն բռնակալութիւնը, չ'պիտի տիրէ եւ այդ «ազգայնական ազատութեան մէջ", որովհետեւ, էապէս, «ազգայնական ազատութիւն» նշանակում է ո՛չ թէ «քաղաքացիական ազատութեան մի որոշ տեսակը», այլ նշանակում է միայն մի ազգութեան բուրժուազիայի ազատութիւն, որն եւ իր դասակարգային տիրապետութեան մէջ պրոլետարիատի դէմ կռիւը նոյն պիտի մղէ նոյն միջոցներով։ Եւ ահա բացայայտ է դառնում ա՛յն էական հանգամանքը որ «Մանիֆէստ»ը, բացի իր անվերջ հակասութիւններից, միանգամայն սխալ կերպով է դնում ազգային ազատութեան խնդիրը, «առաջնորդուելով», ըստ իր սովորութեան, մի քանի ընչին «ի նկատի»ներով ինչ որ «քաղաքացիական ազատութեան որոշ տեսակ»ով եւ «կուլտուրական բազմաթիւ առանձնայատկութիւնների պաշտպանման» տրամաբանութեամբ, որ ի վերջոյ յանգում է բուրժուական-իդէոլոգիական ուտոպիայի։

Ինչպէս ամէն հարցի, նոյնպէս եւ «դաշնակցական հասարակապետութեան" խնդրի մէջ, սոցիալիզմն ունի միայն մի՛ նկատումն եւ մի՛ մեկնման կէտ—պրոլետարիատի ընդհանուր դասակարգային շահը։ Ուրեմն եւ խնդիրը դրւում է այ՛սպէս։ Ռուսաստանի, ինչպէս եւ Կովկասի ազգութիւնների, «դաշնակցական հասարակապետութիւն»ն անհրաժե՞շտ է արդեօք պրոլետարիատի, իբրեւ ուրոյն դասակարգի զարգացման, գործունէութեան եւ նպատակի, այսինքն սոցիալիզմի իրականացման

համար։ Նայած պայմաններին, հարցի այս թէօրիական մասին միանումէ եւ մի գործնական նկատումն, այսինքն, հնարաւ՞որ է արդէօք ձեռք բերել այդ «դաշնակցական հասարակապետութիւն»ը։ Եթէ անհրաժեշտ է եւ հնարաւոր, այ՛ն կ՚պահանջուի եւ ձեռք կ՚բերուի, եթէ ո՛չ անհրաժեշտ է եւ ո՛չ հնարաւոր այն ոչ կ՚պահանջուի եւ ոչ էլ ձեռք կը բերուի, իսկ եթէ անհրաժեշտ է բայց անհնար, հարցը կ՚լուծուի մի այլ յարմար կերպով։ Մեր կարծիքով «Ռուսաստանի ազգութիւնների դաշնակցական ֆեդերացիա»ն թէ՛ անհրաժեշտ չէ եւ թէ անհնար է։

«Դաշնակցական հասարակապետութիւն» կազմելու առաջին անհրաժեշտ պայմանն այ՛ն է որ Ռուսաստանի ազգութիւնները, Կովկասը նոյնպէս, եւ Ռուսական պետութիւնը ներկայացնեն իրանցով անկախ եւ ինքնուրոյն միութիւններ։ Ռուսական պետութիւնն անկախ է, ուրեմն եւ ունի յիշած պայմանը, որ չունեն միւս ազգութիւնները, լինելով հպատակ առաջինին։ Պարզ է որ Ռուսական պետութիւնն, իբրեւ կապիտալիստական-դասակարգային տիրապետութիւն, ո՛չ այժմ, արտօնութիւնի օրով եւ ոչ ապագայ սահմանադրական կարգերի տակ, ինքնակամ չ՚պիտի տայ նրանց այդ պայմանը եւ չ՚պիտի հրատարակէ իր երկիրը «դաշնակցական հասարակապետութիւն»։ Մնում է որ հպատակ ազգերը զէնքի ոյժով եւ ապստամբութեամբ ձեռք բերեն այդ պայմանը, այսինքն դառնան անկախ եւ ինքնուրոյն միութիւններ, որպէսզի այնուհետեւ կարող լինեն կազմել «դաշնակցական հասարակապետութիւն»։ Ահա այս գործը, մեր կարծիքով, անհնար է գլուխ բերել, որովհետեւ Ռուսական պետութիւնն, ինչպէս այսօր նոյնպէս եւ վաղը, իր տրամադրութեան տակ ունի մի առաջնակարգ զինուորական ոյժ, որի հանդէպ հպատակ ազգերը զէրօ են կատարելապէս, մանաւանդ որ, մի կողմից ապստամբութեան վերաբերմամբ այդ ազգերի դասակարգերի եւ ազգերի իրանց

մէջ գոյութիւն չունի ոչ մի սկզբնաւորութիւն եւ ո՛չ մի համաձայնութիւն, եւ միւս կողմից, այդ գործի մէջ միայն իրանք չեն ունենալով, ռուս պետութեան հանդէպ պիտի մնան միայնակ, առանց ռուս ազգի աջակցութեան։

Բացի այն որ ազգային անկախութիւնն եւ «դաշնակցական հասարակապետութիւն» անհնար գործեր են, նրանք նաեւ անհրաժեշտ չեն պրոլետարիատի համար— եւ ա՛յս է խնդրի էական կողմը։ Պրոլետարիատի դասակարգային պահանջների սահմաններից դուրս է միանգամայն ձգտել ունենալ համազգի անկախ բուրժուազիայ, որպէսզի նա «դաշնակից» լինի միւս ազգերի բուրժուազիայի հետ, ինչպէս նաեւ պրոլետարիատի դասակարգային գործունէութեան սահմաններից դուրս է իր կենսական կռիւը թողած կամ ազատագրած, դասակարգային էութիւնից դուրս, բուրժուազիայի յաւելուածը դառնալով, իր տարիներն եւ իր ոյժերը նուիրել ազգային անկախութեան եւ «դաշնակցական հասարակապետութեան» գործին, որը ո՛չ թէ միայն մազաչափ չպիտի առաջ մղէ իր պատմական միսսիան, որովհետեւ համազգի բուրժուազիայի տիրապետութիւնը ոչնչով չպիտի ձեւափոխէ իր ներկայ վիճակը, այլ եւ այդ չափազանց պիտի վնասէ նրան, յետաձգելով իր սեփական փրկութիւնը։

Պրոլետարիատի դասակարգային պահանջներն են— մամուլի, խօսքի եւ համախմբումների ազատութիւն, յաջորդական կրճատումն աշխատանքի ժամերի եւ յաւելումն օրավարձի, ներկայացուցչութիւն եւ ընդհանուր քուէարկութիւն, մի շարք քաղաքական-տնտեսական բարենորոգումներ, եւ ապա դասակարգային Դիքտատուրայ եւ սոցիալիստական բեժիմ։ Ահա այս պահանջների անունով համայն Ռուսաստանի պրոլետարիատը պիտի կապուի օրգանապէս մի՛ կուսակցութեան մէջ եւ ընդհանուր ոյժերով պիտի ձեռք բերէ նրանց։ Ինչ վերաբերում է ռուս բռնակալութեան ճնշումներին լեզուի,

դպրոցների եւ մամուլի վերաբերմամբ, յիշած պահանջների իրականացմամբ արդէն վերանում է այդ բռնութիւնը, եւ պրոլետարիատը, որ այժ ունի պահել եւ զարգացնել իր կազմակերպութիւնը ռուս բռնակալութեան ներքոյ, այժ կունենայ պահել եւ զարգացնել իր լեզուն, որ անմիջապէս կապուած է իր գործունէութեան հետ։ Սրանից դուրս, ամեն ազգային անկախութեան իդէոլոգիա, իբրեւ «քաղաքացիական ազատութեան մի որոշ տեսակ», ամեն «դաշնակցական հասարակապետութիւն», իբրեւ «պաշտպան ազգային բազմաթիւ կուլտուրական առանձնայատկութիւնների» — վնասակար հոսանքներ են պրոլետարիատի պատմական գործի եւ դերի համար, բերելով իրանց հետ անխուսափելիօրէն բուրժուազիայի եւ պրոլետարիատի համերաշխութիւն եւ էական կոմպրոմիսներ յանուն բուրժուազիայի ցնորական շահերի, որոնք ազատազում եւ դանդաղեցնում են դասակարգային կռիւը, որը պրոլետարիատի փրկութեան միակ ղէնքն է։ Ինչպէս նկատել է Մարքս «Քանի դոյութիւն ունի կապիտալիստ հասարակական կազմը, պրոլետարիատը չէ կարող փոխել երկրագնդի քաղաքական աշխարհագրութիւնը»։ (*) Իսկ Մարքսի կարծիքով «պրոլետարիատի յաղթանակը նշան է նաեւ բոլոր ճնշած ազգերի ազատութեան»(**)։ Կրճատելով մեր խօսքը յիշենք որ հակառակ "Լեհ սոցիալիստ կուսակցութեան» ազգայնական ձգտումներին, «Լեհաստանի եւ Լիտվայի Սոցիալ-Դեմոկրատ կուսակցութիւն»ը յայտարարեց հետեւեալը. «Պրոլետարիատն իբրեւ դասակարգային կուսակցութիւն կարող չէ դուրս դալ գործունէութեան ա՛յն ասպարէզից, որը սահմանուած է նրան նոյն իսկ իր բնաւորութեամբ։ Նա կարող չէ ուրիշ կռիւ մղել

(*) Լիլի կօնգրէսի մէջ արտասանուած ճառը։
(**) Լօնտօնի մեկ միտինկի մէջ արտասանուած ճառը

բայց եթէ ա՛յն կռիւը, որն է—տրուած պետութեան սահմանների մէջ միմեանց դէմ հակադրել նոյն պետութեան դասակարդերը։ Սոցիալիզմո՛վ է որ մենք կարող ենք հասնել Լեհաստանի անկախութեան եւ ոչ թէ, ինչպէս կարծում են ազգայնական ձգտումներով սոցիալիստները, ազատ Լեհաստանով պիտի հասնենք սոցիալիզմին»։ (*)

Վերջին հարցը—այդ Հայկական խնդիրն է, որի մասին մենք ստիպուած ենք չափազանց համառօտ խօսել ներկայ բրոշիւրի սահմանների մէջ, մատնանիշ անելով սեր յօդուածները, ուր մենք ընդարձակօրէն պարզել ենք այն։ (**) Արդէն նկատեցինք որ Հայկական խնդրի վերաբերմամբ «Մանիֆէստ»ը պահում է բացարձակ լռութիւն։ Դեռ մօտիկ անցեալի մէջ Կովկասի «ազատամիտ ինտելիդենցեան» անդիտանալով իր երկրի հասարակական պէտքերը, Տաճկա-Հայաստանի անկախութիւնից դուրս ոչինչ չէր տեսնում, իսկ այսօր Կովկասի «սոցիալիստ ինտելիդենցեան» մերժելով Տաճկա-Հայաստանը, ռուս ցարիզմից դուրս ժխտում է ամեն երեւոյթ։ Անդիտակ եւ նեղահայեացք այս ծայրահեղութիւնն առաջանում է ա՛յն քառակի սխալ եւ խեղաթիւրած ըմբռնումից որ ունեն «Պրոլետարիատ»ի ձեռնարկողները նախ սոցիալիզմի թէօրիական եւ գործնական խնդիրների մասին, որն եւ մենք արդէն պարզեցինք, երկրորդ հայկական չարժման մասին, երրորդ Կովկասի հայ պրոլետարիատի դերի մասին եւ չորրորդ Տաճկահայ հասարակութեան տնտեսական կազմի եւ դասակարդերի էութեան ու յարաբերութեան մասին։ Այդ խեղաթիւրումն մենք

(*) Przeglad Robotniczy, 1900 Մայիսի թիւը։
(**) „Հանդէս" թիւ 1—5, 1900 „Հայ սոցիալիստ կուսակցութիւն", "Հայկական իրականութիւնը", „Ամերիկայի հայ բանւորները"։

դանում ենք «Մանիֆէստ»ից անմիջապէս յետոյ տպած «Սոցիալ-Դէմոկրատիա եւ իրականութիւն» յօդուածի մէջ։ Հարկ կ'լինէր մի նոր բրոշիւր գրել քննադատելու համար այդ յօդուածի բոլոր մասերը։

«Պրոլետարիատ»ի կարծիքով «Ռուս-Թրքական պատերազմը մեծ դարկ տուեց բուրժուական ազգային ինքնաճանաչութեան... եւ հայ երիտասարդները սկսեցին խմբեր եւ կուսակցութիւններ կազմակերպել Տաճկահայաստանում ազգային ինքնավարութիւն ստանալու նպատակով։ Այսպիսով սկսեց հայկական շարժումը»։ (*) Ինդիրն այ'ն է որ հայկական շարժումը «դաղափարների սլացումով» չ'առաջացաւ եւ ո'չ էլ այն Կովկասի «Հայ երիտասարդների» կամքով սկիզբն առաւ։ Առաջ եկած դեռեւս XIX դարի կէսից, 1878 ին Ռուս-Թրքական պատերազմից յետոյ անբուժելի դարձաւ այլեւս Տաճկաստանի տնտեսական կրիզը, որը կայանում էր այ'ն հակասութեան մէջ որ երկրի նահապետական քարացած մանր արդիւնաբերութիւնն անկարող էր բաւարարութիւն տալ կառավարական ֆինանսական պէտքերին, որոնց գոհացման համար անհրաժեշտ էր խոշոր ինտուստրիայի մուտքը, որին արգելք հանդիսացաւ Սուլթանական պետութիւնը իր ասիական միապետութիւնը կանգուն պահելու համար։ Ցնցված իր տնտեսական հիմքերի մէջ, հարկերով բեռնաւորված եւ աւազակների ու կառավարութեան ձեռքով թալանված ու մորթված, հայ ժողովուրդը սկսեց շարժուել։

Այդ շարժումն առաւ ազգային իդէոլոգիայի կերպարանք, որին եւ արձագանք եւ դարկ տուեց Կովկասի ինտելիգենցիան։ Այսպէս լինելով, Հայկական շարժումը դառնում է պատմական անհրաժեշտ երեւոյթ, որն ունի իր տնտեսական պատճառները։

Կովկասի հայ պրոլետարիատն ինչպէս որն պարտա-

(*) „Proletarias" թիւ 1 էջ 9։

ւոր է ընդարձակել իր մասնաւոր աշխարհը, ճիշդ ըմբռնումն ունենալով այլեւայլ երկրների մէջ կատարուած հասարակական երեւոյթների մասին, նա պէտք է եւ ճանաչէ հայկական շարժման էութիւնն ու պատճառները, մանաւանդ որ լեզուի եւ գրականութեան նոյնութիւնը նրան աւելի ընտանի է դարձնում Տաճկահայերի հետ։ Պատմականօրէն ըմբռնած հայկական շարժումը, իբրեւ տնտեսական դրանոֆորմացիա նախ ճանաչելով նրա անհրաժեշտութիւնը եւ ընդունելով որ այն վերջ պիտի գտնէ միայն կապիտալիզմի մուտք գործելով, լինի այդ Եւրոպական գերիշխանութեամբ թէ հայկական նահանգների ավտոնոմիայով, եւ միւս կողմից ենթադրելով որ քանի Եւրոպական պետութիւնների յարաբերութիւնը դէպի Թիւրքիան անխախտ է, կազմակերպված ժողովրդային ապստամբութիւնը կարող է որոշ հետեւանքների հասնել, Կովկասի Հայ Սոցիալ-Դէմոկրատիան պէտք է կողմնակից լինի այդպիսի յեղափոխութեան։ Այս հանգամանքն անկասկած չէ արգելում նրան թէորիական եւ դասակարգային տեսակէտից քննադատել մեր յեղափոխական կուսակցութիւնները, ինչպէս նաեւ կազմակերպած ապստամբութեան տեսակէտից քննութեան ենթարկել նրանց գործնական ձեռնարկները։ Այս հանգամանքը չէ արգելում նաեւ բացառել միանգամայն յեղափոխութեան եւ ապստամբութեան հնարաւորութիւնը, եթէ այս կամ այն քաղաքական փոփոխութիւնը մտնէ Եւրոպայի եւ Թիւրքիայի մէջ, եւ կամ եթէ Տաճկահայ ժողովուրդը միանգամայն անընդունակ ներկայանայ այդպիսի ապստամբութեան։

Հայկական հարցի հետ կապված է «Պրոլետարիատ»ի կարծիքը Հնչակեան Կուսակցութեան մասին։ Նրա ասելով վերջինս սոցիալ-դէմոկրատիական սկզբունքների անունով «ձեւափոխեց» հայկական իրականութիւնը։ Եւ "Պրոլետարիատ„ը չարունակում է „Նազարբէգ իր

''Սոցիալիզմ եւ Հայկական շարժում,, աշխատութեան մէջ ճգնում էր ապացուցանել որ Տաճկահայաստանում բանւորական կռիւ գոյութիւն ունի։ Մի երկրի մասին որ դեռ կապիտալիստական կազմը չէ ընդունել, ասել թէ բանւորական այն էլ արիւնահեղ կռիւ կայ, այնպիսի աբսուրդ եզրակացութիւն է որ միանգամայն ծիծաղ է առաջ բերում քիչ թէ շատ մտածող մարդու մէջ։ (*)

Նախ Նազարբէգ այդպիսի վերնագրով «աշխատութիւն» չէ ունեցել, այլ տպագրել է եօթ էջերից բաղկացած գերմաներէն մի յօդուած ''Հայկական հարցը եւ սոցիալիզմ'' վերնագրով, որի մասին է անկասկած ''Պրոլետարիատ''ի խօսքը։ Այս մանրամասնութիւնը ընորոշ է ա՛յն տեսակէտից որ վերջինս իր ''ձեւափոխուած'' տեղեկութիւնները քաղում է երրորդական բերաններից։ Այդ յօդուածի մէջ Նազարբէգ ասում է. ''տնտեսական զարգացման եւ տնտեսական պայմանների կապիտալիստական ընաւորութիւնը օրէցօր աւելի պարզ երեւան է դալիս, ստեղծելով իր պատմական զուգընթաց երեւոյթը—պրոլետարիատը''։ (**) Դաղտնիք է թէ ''Պրոլետարիատ,,ը ո՞րտեղից է առել ,,բանւորական արիւնահեղ կռիւ'' արտայայտութիւնը։ Երեւի նա իր տեղեկութիւնը քաղել է ,,Մուրճ''ից, (***) իրանից եւս ենթադրելով թէ քանի որ Նազարբէգ գործածել է ''պրոլետարիատ,, բառը, ուրեմն եւ ասած կ'լինի թէ ''Տաճկա-Հայաստանում բանւորական արիւնահեղ կռիւ կայ,,։ Այստեղ ''Պրոլետարիատ,,ի եւ Նազարբէգի դերերը փոխւում են իբրեւ ''քիչ թէ շատ

(*) ,,Proletariat'' թիւ 1 էջ 10:

(**) «Die Neue Zeit» No. 42 XIV Jahr. II b. 1895—1896. A. Nazarbek—Die Armenische Frage und der Socialismus p. 498

(***) «Մուրճ» 1896 թիւ 4 Գ. Խաչակեան «Հարկերը Տաճկաստանում»:

մտածող,, եւ ''ծիծաղ առաջ բերող,,։ Դալով Նազարբէգի յիշած յօդուածին եւ առհասարակ ''Հնչակ,,ի ուղղութեան, մենք ստիպւած ենք միայն բաւականանալ այ՛ն նկատողութեամբ, որ, ''Հնչակ,,ը երբէք ոչ սոցիալիստական օրգան է եղել, ոչ այդպիսի կուսակցութիւն է կազմել եւ ո՛չ էլ հայկական իրականութիւնը խեղաթիւրել է սոցիալիզմի անունով։ ''Պրոլետարիատ,,ի յիշած նոյ՛ն ամբողջ յօդուածի մէջ Նազարբէգ միայն պաշտպանում է Տաճկա-Հայաստանի անկախութեան խնդիրը ճի՛շտ այն ծաւալով, ա՛յն տեսակէտից եւ ա՛յն հիմքերի վրայ որպէս ընդունւած է այդ մեր հասարակութեան մէջ եւ մեր յեղափոխականների կողմից։ Սոցիալիզմի մասին ակնարկները միայն իբրեւ անունն եւ համառօտ հաստատած, միջանկեալ եւ անջատ տեղ են բռնում յօդուածի սկիզբը։ Լապէս ''Հնչակ,,ը սոցիալիզմի սկզբունքնե՛րն է միայն աղաւաղել, թէ այդ յօդուածով եւ թէ 15 տարեայ ընթացքի մէջ իբրեւ միայն ինտելիգենտ սիրող մի քանի չնչին թարգմանութիւններով եւ բռնազբօսիկ յառաջաբաններով սոցիալիզմի մասին, իբրեւ մի անջատ աշխատանք, եւ զուրկ դասակարգային ըմբռնումից, նա կազմել է իր զուտ ազգային յեղափոխական կուսակցութիւնը հայ հասարակութեան ամ'էն խաւերից, իր 15 ամեայ մտաւոր եւ գործնական ոյժերը նւիրելով միա՛յն եւ բացառապէս Տաճկա-Հայաստանի անկախութեան գործին։ (*)

Սակայն այս ամենը «Պրոլետարիատ»ն ասում է կողմնակի ապացուցանելու համար որ Տաճկա-Հայաստան մի երկիր է «որ դեռ կապիտալիստական կազմ չէ ընդունել եւ սոցիալ-դէմոկրատիական գաղափարները

(*) Տես «Հանդէս» 1900 թիւ 1 մեր յօդուածը «Հայ սոցիալիստ կուսակցութիւն» եւ մեր «Դրագիր Հայ սոցիալ-դիմոկրատ կուսակցութեան» նախաբանը, 1901:

ո՛չ մի գործադրութիւն չեն կարող ունենալ» այնտեղ։ (*) Ապա ուրեմն բնական է որ ըստ «Պրոլետարիատ»ի Տաճկա-Հայաստանի մէջ սոցիալիզմ, տնտեսական խնդիրներ, եւ ո՛րեւէ առնչութիւն Կովկասի պրոլետարիատի եւ Տաճկահայ ո՛րեւէ տարրի հետ «ծիծաղ պիտի յարուցանեն քիչ թէ շատ մտածող մարդու մէջ»։ Տաճկաստանի մէջ կապիտալիզմ չ'կայ—այս խօսքերը որոճացել են անդադար ամենքը, առանց երբէք որոշելու երկրի տնտեսական պայմանները։ Այս կարծիքը չափազանց սիրելի է «Դրօշակ»ին, որ եւ կրկնել է այն թէ մամուլի(**) եւ թէ ժողովների մէջ։ Նրա համար միանգամայն ձեռնտու է որ ո՛չ մի նոր հոսանք եւ անջատումն մուտք չ'գործէ երկրի մէջ, ուր նա ձգտում է տիրապետել իբրեւ ազգային-յեղափոխական կուսակցութիւն։ Պ. Խաժակնեան գրում էր. «Հայ գաղթականին կամ քրդի ու վաչխառուի ձեռքից սար ու քոլ ընկած հայ մուրացիկին պրոլետարիատ տիտղոսը տուին եւ նրանց վրին փաթաթեցին զանազան թէորիաներ»(***)Այս կարծիքն է որ կրկնում են «Պրոլետարիատ»ի ներկայացուցիչները, երեւակայելով անկասկած թէ խօսում են սոցիալիզմի եւ իրականութեան վրայ հիմնուած, „Մուրճ" ամսագիրն իրանց առաջնորդ ունենալով։

Բայց ահա իրականութիւնը, որը սակայն պէտք է ըմբռնել։ Ներկայի մէջ խոշոր արդիւնաբերութիւնն, իբրեւ մասնակի երեւոյթ, հաստատուել է Տաճկա-Հայաստանի միայն մի քանի կեդրոնների մէջ, ինչպէս նաեւ

(*) «Պրոլետարիատ» թիւ 1 էջ 10

(**) «Դրօշակ» 1891 թ. 1, եւ 1894 թ. 7, 8, նաեւ փրանս. տեղեկագիրը 1896 ի Լօնտօնի սոցիալ-միջազգ. կոնգրէսին

(***) «Մուրճ» 1896 թիւ 4—5 «Հարկերը Տաճկաստանում» էջ 453. Տես այդ առիթով մեր յօդուածը «Ամերիկայի Հայ բանւորները», «Հանդէս» 1900 թիւ 2.

Եւրոպական ապրանքները մուտք գործելով երկիր, քայքայում են տեղական արդիւնաբերութեան այլեւայլ ճիւղերը։ Թէեւ Տաճկա-Հայաստանի մէջ տիրող սիստէմն է մանր արդիւնաբերութիւն եւ մանր երկրագործութիւն, սակայն երկիրն այսօր տաղնապում է մի ծանր կրիզի մէջ, որը պայմանաւորուած է մանր արդիւնաբերութեան եւ մանր երկրագործութեան վերջնական ագոնիայով եւ խոշոր արդիւնաբերութեան ու խոշոր երկրագործութեան անխուսափելի պահանջով։ Այսպիսի պայմանների մէջ պարզ է որ այնտեղ բացակայում է ինդուստրիական պրոլետարիատ, թէեւ, կրկնումենք, այլեւայլ կեդրոնների մէջ գործում են ցիրուցան բանւորներ։ Սա նախապատրաստական վիճակ է, երբ հայ սոցիալիստները կարող են հրապարակ ելնել, հիմքը դնելով սոցիալիստական կազմակերպութեան, տարածելով սոցիալիզմի սկզբունքները, բացադրելով երկրի տնտեսական վիճակն եւ դասակարգերի յարաբերութիւնները, ինչպէս նաեւ բանակուելով մեր յեղափոխական կուսակցութիւնների դէմ։ Բայց կայ մի այլ հանգամանք։ Հէնց ներկայ երկրագործութեան եւ նրա ագոնիայի մէջ կատարւում է հողերի կեդրոնացման պրոցէսը։ Երկրի ամեն կողմերն առաջ է եկել եւ ստեղծանում է երկրագործական մի նոր տարր, որ յայտնի է մարաբայ (métayer, Meier) անունով։ Մարաբաների մի մասն այսօր հասուն տարր է, պատրաստ վերածուել ինդուստրիական պրոլետարիատի, սակայն ինդուստրիայի բացակայութեան պատճառով, այդ տարրը գլխաւորապէս գաղթում է Ամերիկայ, կազմելով այնտեղ պրոլետարիատ դասակարգ։ Նրանց միւս մասն երկրի մէջ, զուրկ գործիքներից եւ հողից, այլեւայլ պայմաններով վարձած հողատէր գիւղացիների եւ խոշոր հողատէրերի մօտ կազմում է գիւղական բանւոր դասակարգ։ Ահա այդ մարաբայ դասակարգն է որ ներկայ պայմանների տակ

հիմք պիտի լինի սոցիալիստ կուսակցութեան կազմութեան Տաճկա-Հայաստանի մէջ, մինչեւ որ մօտիկ ապագան երկաթուղիների(*) եւ զործարանների հետ կ'բերէ նաեւ ինդուստրիական պրոլետարիատ։ (**)

Բացի Տաճկա-Հայաստանից մենք արդէն ունենք ինդուստրիական պրոլետարիատ Ամերիկայ, Բուլղարիայ, Եգիպտոս եւայլն։ Դասակարգային համերաշխութիւնն եւ լեզուի ու գրականութեան նոյնութիւնը պէտք է մօտեցնէ միմեանց այդ երկրների եւ Կովկասի հայ պրոլետարիատը, որով միայն նրանք կ'զարգանան եւ կ'գործեն պատմական ընդարձակ հորիզոնի մէջ, դիտակից իրանց դերի եւ իրանց պարտականութիւնների վերաբերմամբ։

Այլ անդամ մենք կ'խօսենք ընդարձակօրէն թէ Տաճկա-Հայաստանի, եւ թէ Կովկասի Հայ պրոլետարիատի եւ Տաճկահայ մարաբայ դասակարգի յարաբերութեան մասին, ինչպէս նաեւ Կովկասի Հայ Սոցիալ-Դէմոկրատիայի բռնելիք դիրքի եւ ունենալիք դերի մասին դէպի Հայկական հարցը եւ դէպի մեր յեղափոխական կուսակցութիւնները։

(*) Երկաթուղիների վերաբերմամբ տես Ze Marché Financier 1901—1902 էջ 746—758, եւ von Pressell-Heschemin de fer en Turqui d'Asie

(**) Տես «Հանդէս» յիշուած յօդուածները եւ «Ծրագիր Հայ Սոցիալ-Դեմոկրաս Կուսակցութեան»։

2013

«ՀԱՅ ՍՈՑ. ԴԻՄՕԿՐ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1	„Հանդէս„ սոցիալիստ. օրգան,	1900	Թիւ 1 գինը	1 1/2	ֆ.
2	„Հանդէս" " "	"	Թիւ 2 "	1 1/2	"
3	"Հանդէս" " "	"	Թիւ 3 "	1 1/2	"
4	"Հանդէս" " "	"	Թիւ 4–5 "	2 1/2	"
5	"Ծրագիր Հայ Սոց. Դիմօկր. Կուսակցութեան"			0,50	"
6	Եր. Պալեան—"Հայ Սոցիալ դիմօկր. միութիւն"ը եւ իր "Պրոլետարիատ„ օրգանը—			0,60	"

ՇՈՒՏՈՎ Կ'ՄՏՆԷ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ

7 Եր. Պալեան Սոցիալիզմ եւ «Հայ Յեղափոխ. Դաշնակցութիւն»
8 Եր. Պալեան Սոցիալիզմ եւ «Հնչակեան Կուսակցութիւն»
9 Եր. Պալեան Նալբանդեանի "Երկրագործութիւն„ը ֆնկ. տեսք.

ԴԻՄԵԼ

Mr. J. Wander—Genève (Suisse)

ԳԱՌՆԻԿ Գ. ՄԱԶՄԱՆԵԱՆ

ԳՐԱՎԱՃԱՌ, ԹՂԹԱՎԱՃԱՌ

Տպագրիչ, Հրատարակիչ եւ

ԳՈՐԾԱԿԱԼ ԹԵՐԹԵՐՈՒ

ՐՈՒՍԱՁՈՒՊ

Բացի **առեւտրական թուղթերէ**, որոնք կը պատրաստէ բոլորովին նորանոր եւ գեղեցիկ, կը տպագրէ ու կը հրատարակէ նաեւ **գիրքեր եւ հանդէսներ**՝ նախանձելի մաքրութեամբ եւ ամրձելի գներով:

Օրական հեղինակութիւններու եւ բարգմանութիւններու հրատարակութեանը համար բացառիկ դիւրութիւններ կը ընծայուին ու կը տարածուին գանոնք:

Իբրեւ գործակալ „**Մուրճ**"ի „**Հանդէս Ամսօրեայ**"ի **Լոյսի** եւ այլ **Հայերէն** ու **Ֆրանսերէն** հանդէսներու՝ պատրաստէ ծառայելու իրեն դիմողներուն:

☛ „**Մուրճ**"ի տարեգիրը միանուագ վճարելու դիւրութիւնը չունեցողներուն իր պատասխանատուութեանը տակ ըստ հնարս դիւրութիւններ կուտայ: